

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/10

26 հունվարի 2016 թ.

Քննարկվեց «Մեդպրոգրես» ՍՊԸ 25.12.2015թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 01.12.2015թ-ի թիվ 5012870 ակտի դեմ:

«Մեդպրոգրես» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

2015թ-ի հուլիսի 22-ին ՀՀ Քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածի հատկանիշներով: Հանցակազմի բացակայության հիմքով 19.11.2015 թ-ին քրեական գործի վարույթը կարճվել է:

Հարուցված քրեական գործի շրջանակներում ի կատարումն քննիչի հանձնարարականի ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ-հետախուզության վարչության կողմից համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 15.10.2015 թ-ի թիվ 5012870 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահված իրավասության սահմաններում «Մեդպրոգրես» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 01.12.2015թ.-ին կազմվել է թիվ 5012870 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 2.623.158 դրամ:

Ստուգման ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ՀՀ քաղաքացի Արմինե Գագիկի Խաչատրյանը 26.04.2013 թ-ից առ այսօր հանդիսանում է «Մեդպրոգրես» ՍՊԸ-ի 45 տոկոս մասնակիցը և 05.05.2015 թ-ից առ այսօր (01.12.2015) «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ի 100 տոկոս մասնակիցը: «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի բ/ ենթակետի համաձայն առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը, ապա փոխկապակցվածության հիմքի վրա կազմակերպությունը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, ուստի «Մեդպրոգրես» ՍՊԸ-ն 05.05.2015 թ-ից չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, հետևաբար կհամարվի ԱԱՀ վճարող:

Հիմք ընդունելով վերը նշվածը 05.05.2015 թ-ից մինչև 30.06.2015 թ-ի հաշվետու ժամանակաշրջանների համար համաձայն «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության, հաշվարկվում է ԱԱՀ գումար ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ և ՀՀ պետական բյուջե վճարման ԱԱՀ-ի գումարը կազմում է 2015 թ-ի 2-րդ եռամսյակում 1.692.906 դրամ: Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով ենթակա է գանձման ընդամենը 2.623.158 դրամ:

Ակտում ներկայացված է, որ Արմինե Գագիկի Խաչատրյանը առ 01.12.2015 թ-ը հանդիսանում է «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ի 100 տոկոս մասնակիցը: Սակայն նա 03.11.2015 թ-ից այլևս չի հանդիսանում «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ի մասնակիցը:

Ակտով կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ հոդվածի դրույթները, մինչդեռ քննարկվող եռամսյակի ընթացքում ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հաշվետվություններ, որոնք ընդունվել են հարկային մարմնի կողմից (ներկայացվում է կից):

Երկրորդ՝ «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ն գրանցելիս, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում որևէ կերպ չի զգուշացվել, որ 20 տոկոս և ավելի այլ ՍՊԸ-ում մասնակից լինելը երկու ընկերությունների համար էլ կարող է ԱԱՀ-ի դաշտում հայտնվելու վտանգ առաջացնել, մինչդեռ նախորդ տարիներին պետական ռեգիստրում ՍՊԸ գրանցելիս տրամադրվում և լրացվում էր հատուկ բլանկ, որից հնարավոր էր տեղեկանալ ու կանխարգելել ԱԱՀ-ի դաշտում հայտնվելու հարցը:

Նոր Նորքի հարկային տեսչությունում «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ին առաջարկվեց ընտրել՝ ցանկանում են աշխատել ԱԱՀ-ով, թե շրջանառության հարկով: Այն դեպքում, երբ այս ՍՊԸ-ն անտեղյակության պատճառով իր բացման օրվանից սկսած արդեն իսկ հայտնվել էր ԱԱՀ-ի դաշտում:

Թե «Մեդպրոգրես» և թե «Յունիմեդիքալ» ընկերությունների շրջանառության հարկի եռամսյակային հաշվետվություններն ամիսներ շարունակ առանց առարկությունների շարունակում էին ընդունվել: Երկու ՍՊԸ-ներից ոչ մեկը ամիսներ շարունակ ծանուցում չի ստացել ԱԱՀ-ի դաշտ անցնելու վերաբերյալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ հաշվետվությունները պատշաճ լրացնելու և ուղարկելու դեպքում համակարգը հարկ վճարողին (համակարգից օգտվողին) ներկայացնում է հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցում: Ծանուցումը հավաստում է այն փաստը, որ հաշվետվությունը տվյալ օրը և ժամին, հարկային մարմնի տեղեկատվական համակարգում գործող համապատասխան համակարգչային ծրագրով ձևավորված գրանցման համարով ներկայացվել ու գրանցվել է հարկային մարմնի տվյալների բազայում: Վերջինս կհանդիսանա հարկային մարմին հաշվետվություն ներկայացնելու օր: Հարկ վճարողը հնարավորություն ունի տպելու իր ուղարկած հաշվետվությունը, ինչպես նաև վերը նշված ծանուցումը: Հարկ վճարողի կատարած գործողությունների լիարժեք պատմությունը պահպանվում է հարկային մարմնի կայքէջի իր համապատասխան դարանում, որտեղից նա կարող է բեռնել տեղեկատվությունը և տպել: Հարկ վճարողի ներկայացրած հաշվետվությունները փոփոխման ենթակա չեն:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.11.2015 թ-ին ընդունված օրենքի համաձայն 4-րդ հոդվածը այսուհետ լրացվում է հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը օրենքով սահմանված այլ պայմանները բավարարելու դեպքում համարվում են (շարունակում են համարվել) շրջանառության հարկ վճարող, եթե այդ ենթակետերում նշված այլ անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացրել»:

Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2016 թ-ի հունվարի 1-ից, որոնց գործողությունը տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից հետո Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված հիմքերով անձանց փոխկապակցվածությունը բացահայտելու դեպքերի վրա անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել այդ փոխկապակցվածությունը:

Մինչև 2016 թ-ի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անձին շրջանառության հարկ վճարող համարվելու առումով բավարար է միայն սույն օրենքի 1-ին հոդվածում նշված այլ անձանց կողմից փաստացի գործունեություն իրականացված չլինելու հանգամանքը: Եթե կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև 2016 թ-ի հունվարի 1-ը, Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերի համաձայն, չեն համարվել շրջանառության հարկ վճարող կամ դադարել են համարվել շրջանառության հարկ վճարող, ապա սույն օրենքի ընդունումից հետո նրանց մասով հարկային պարտավորությունների վերահաշվարկ չի կատարվում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածը նախաստեղծում է՝ Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

2. Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Ելնելով վերը նշվածից՝ գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել 01.12.2015թ-ին կազմված թիվ 5012870 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 15.10.2015 թ-ի թիվ 5012870 հանձնարարագրի համաձայն «Մեդպրոգրես» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿՎ 01.12.2015 թ-ի թիվ 5012870 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.623.158 դրամ:

Ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ քաղաքացի Արմինե Գազիկի Խաչատրյանը 26.04.2013 թ-ից առ այսօր հանդիսանում է «Մեդպրոգրես» ՍՊԸ-ի 45 տոկոս մասնակիցը և 05.05.2015 թ-ից առ այսօր «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ի 100 տոկոս մասնակիցը: «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետի համաձայն առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետիր) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային

կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը, ապա կազմակերպությունը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, ուստի «Մեդպրոգրես» ՍՊԸ-ն 05.05.2015 թ-ից չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, հետևաբար կհամարվի ԱԱՀ վճարող:

Հիմք ընդունելով վերը նշվածը 05.05.2015 թ-ից մինչև 30.06.2015 թ. հաշվետու ժամանակաշրջանների համար համաձայն «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերության հաշվարկվել է ԱԱՀ 20 տոկոս դրույքաչափ, որը 2015 թ-ի 2-րդ եռամսյակում կազմել է 1.692.906 դրամ: Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով զանձման է առաջադրվել ընդամենը 2.623.158 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

Հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-167-Ն օրենքի 1-ին հոդվածի համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ 2012 թ-ի դեկտեմբերի 19-ի ՀՕ-236-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը օրենքով սահմանված այլ պայմանները բավարարելու դեպքում համարվում են (շարունակում են համարվել) շրջանառության հարկ վճարող, եթե այդ ենթակետերում նշված այլ անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացրել»:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Մինչև 2016 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անձին շրջանառության հարկ վճարող համարվելու առումով բավարար է միայն սույն օրենքի 1-ին հոդվածում նշված այլ անձանց կողմից փաստացի գործունեություն իրականացված չլինելու հանգամանքը: Եթե կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերի համաձայն, չեն համարվել շրջանառության հարկ վճարող կամ դադարել են համարվել շրջանառության հարկ վճարող, ապա սույն օրենքի ընդունումից հետո նրանց մասով հարկային պարտավորությունների վերահաշվարկ չի կատարվում»:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության Արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ քննարկվող դեպքում «Մեդպրոգրես» ՍՊԸ-ն բավարարում է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-167-Ն օրենքի 1-ին և 4-րդ հոդվածներով

սահմանված դրույթների պահանջներին: Մասնավորապես, գործում առկա են այլ անձի՝ «Յունիմեդիքալ» ՍՊԸ-ի կողմից փաստացի գործունեություն իրականացված չլինելու հանգամանքը հիմնավորող ապացույցները, այն է՝ պարտավորությունների առաջադրման ժամանակահատվածի համար հարկային մարմին ներկայացված գրոյական հաշվետվությունները:

Բացի այդ, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-167-Ն օրենքն ընդունվել է 24.11.2015 թ-ին, իսկ «Մեդպրոգրես» ՍՊԸ-ի վերաբերյալ Ակտը կազմվել է (հարկային պարտավորությունների վերահաշվարկը կատարվել է) 01.12.2015 թ-ին: Այսինքն, «Մեդպրոգրես» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերահաշվարկը կատարվել է վերոգրյալ ՀՕ-167-Ն օրենքն ընդունումից հետո, ինչը հակասում է նույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված դրույթների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ «Մեդպրոգրես» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ ՕՀՎ 01.12.2015 թ-ի թիվ 5012870 ակտի 3-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ